

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՄԵԾ
ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի ազգային ազատագրական դարավոր պայքարը՝ ուղղված օսմանյան բռնակալության դեմ նոր վերելք, նոր զարթոնք ապրեց 1870-ական թթ. վերջերին, երբ տեղի ունեցավ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, պատերազմ, որը ցարական կառավարությունը վարում էր քրիստոնյա ժողովուրդներին սուլթանական թուրքիայի ծանր լծից ազատագրելու նշանաբանով: Այս հանգամանքի հետևանքով Բալկաններում ավելի ծավալվեցին հակաօսմանյան ապստամբական շարժումները, իսկ Հայաստանում, Հայ ժողովրդի լայն խավերում նորից բարձրացավ Արևմտյան Հայաստանը թուրքական տիրապետությունից ազատագրելու խնդիրը:

Հետաքրքիր է, որ հայություն մեջ մեծ ոգևորություն առաջացրեց հատկապես այն փաստը, որ նշված պատերազմում, ռուսական զորքերի կազմում գործում էին բազմաթիվ նշանավոր հայ գեներալներ ու զինվորականներ: Պատերազմում ղեկավար ու պատասխանատու պոստեր ունեին գեներալներ Մ. Տ. Լորիս-Մելիքովը, Արշակ Տեր-Ղուկասովը, Հովհաննես Լազարևը, Բ.Շելկովնիկովը, Ալխազովը, Քիչմիշևը և ուրիշներ: Լորիս-Մելիքովը, օրինակ, Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարն էր, իսկ գեներալ լեյտենանտ Տեր-Ղուկասովի հրամանատարությունն տակ էր գտնվում «Երևանյան ջոկատ» հայտնի զորամասը, որը հաջողությամբ կռվում էր թուրքական զորքերի դեմ Արևմտյան Հայաստանում¹:

Համընդհանուր ոգևորություն պայմաններում թե՛ արևմտահայերը և թե՛ արևելահայերը ձեռնարկեցին ամեն ինչ, որպեսզի օգնեն ռուսական բանակին: Ռուս զինվորները ստացան բազմապիսի նյութական և ռազմական օգնություն: «Շատ դեպքերում ռուս վիրավորված զինվորներին տեղավորելով իրենց բնակարաններում, գրավված քաղաքների ու գյուղերի հայ բնակիչները մեծ զրկանքների գնով խնամում, կերակրում էին նրանց:

* Զեկուցումը կարդացվել է Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում տեղի ունեցած գիտական նստաշրջանում 1998 թ. հոկտեմբերին:

1 Сборник материалов по русско-турецкой войне 1877–1878 гг. на кавказско-малоазиатском театре, вып. 1–2, СПб., 1903.

Հայ գյուղացիները ռուսական զորաբանակներին ու հայկական կամավորական ջոկատներին տրամադրում էին բնակարան, վառելիք, մեծ քանակությամբ սննդամթերք, անասուններ, անասնակեր և այլն, իրենց սայլերով ու այլ փոխադրամիջոցներով, գործիքներով ու սեփական աշխատանքով օգնում էին սակրավորներին, անմիջական մասնակցություն ցուցաբերում ճանապարհների, կամուրջների և ամրությունների շինարարության ու նման այլ աշխատանքներում»²:

Միաժամանակ ստեղծվեցին հայ կամավորական ջոկատներ Հայաստանում և Անդրկովկասի գրեթե բոլոր հայաբնակ գավառներում, որոնք աչքի ընկան իրենց սխրագործություններով: Բազմաթիվ հայ կամավորներ «անձնագույն պայքարի փառավոր էջեր գրեցին պատերազմի տարեգրության մեջ»³: Հիշենք Րաֆֆու «Խնկթը»: Չմոռանանք նշել, որ ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմում հայերի գործուն մասնակցության մասին դեռևս տասնյակ տարիներ առաջ հրատարակվել են մի շարք կարևոր աշխատություններ⁴:

* * *

Ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմում, ինչպես հայտնի է, թուրքիան ծանր պարտություն կրեց և ստիպված եղավ 1878 թ. փետրվարի 19-ին (նոր տոմարով մարտի 3-ին) Աան Ստեֆանոյում կնքել պայմանագիր, որով Ռուսաստանը զգալիորեն ուժեղացրեց իր քաղաքական գիրքերը Բալկաններում և Փոքր Ասիայում: Բացի դրանից Ռուսաստանը թուրքական տիրապետությունից ազատագրեց Կարս, Արգահան, Բաթում քաղաքները⁵: Միաժամանակ պայմանագրի 16-րդ հոդվածով թուրքական պետությունը՝ Բարձրագույն Դուռը պարտավորվեց բարենորոգումներ իրականացնել Արևմտյան Հայաստանում: Այդ հոդվածում ասված էր. «Որովհետև ռուսական զորքի Հայաստանում գրաված, բայց թուրքիային վերադարձնելիք տերիտորիայից հեռանալը կարող է առաջ բերել ընդհարումներ ու բարդություններ, որոնցից երկու երկրների (թուրքիայի և Ռուսաստանի) լավ հարաբերությունները կվնասվեն, ուստի Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայաբնակ նահանգներում առանց ուշացնելու իրականացնել տեղական կարիքներից բխող բարվոքումներ ու բարենորոգումներ, և երաշխավորել նրանց (հայերի) ապահովությունը քրգերից ու չերքեզներից»⁶: Ըստ պայմանագրի, ռուսական զորքերը պետք է մնային իրենց կող-

2 Հայ ժողովրդի պատմություն. Հ. VI, Երևան, 1981, էջ 105:

3 Նույն տեղում:

4 Տես՝ Ս ա լ –Մ ա ն. Ռուս-տաճկական 1877–1878թթ. պատերազմը և նրա հայազգի հերոսները. պր. 1–4, Թիֆլիս, 1915: Ա. Ն. Ն եր ս ի ս յ ա ն. Հայերի մասնակցությունը 1877–1878թթ. ռուս-թուրքական պատերազմին. Երևան, 1958, և այլ գրքեր:

5 Н. И. Б е л я е в. Русско-турецкая война 1877–1878 г. М., 1956.

6 Сборник договоров России с другими государствами, М., 1952, с. 168–169.

մից գրաված Հայկական տարածքում (վեց վիլայեթներում) այնքան ժամանակ, ինչքան հարկավոր էր, որ Բ. Դուռը իրագործեր նախատեսված ռեֆորմները: Այսպիսով ստեղծված էր միանգամայն ռեալ հնարավորություն արևմտահայերի վիճակը բարելավելու համար:

Սակայն պատմական իրագրությունը շուտով այլ ընթացք ստացավ: Եվրոպական պետությունները՝ Մեծ Բրիտանիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան ու Գերմանիան, շահագրգռված լինելով պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը, հանգես եկան Սան Ստեֆանոյի պայմանագրի գեմ: Խիստ վճռական դիրք գրավեց հատկապես Ռուսաստանի գարավոր հակառակորդ Մեծ Բրիտանիան: Անգլիական կառավարության ներկայացուցիչները չթաքցրին իրենց որոշումը՝ գենքի ուժով պաշտպանել թուրքիային: Ռուսաստանը տեղի տվեց: Այսպիսով Անգլիայի և նրա գաղնակիցների պահանջով 1878 թ. հունիս-հուլիս ամիսներին կայացած Բեռլինի կոնգրեսում վերանայվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու խնդիրը, կամ այլ կերպ ասած՝ Հայկական հարցը: Սան-Ստեֆանոյի 16-րդ հոգվածի փոխարեն Բեռլինի կոնգրեսը ընդունեց մի պայմանագիր, որի 61-րդ հոգվածով միջազգայնացվեց Հայկական հարցը և, ըստ էության, այն թողնվեց բախտի քմահաճույթին⁷: Ավելին. Հայկական հարցի միջազգայնացումը նոր անօրինակ ողբերգություններ, զանգվածային կոտորածներ ու ցեղասպանություն բերեց արևմտահայերին: Հետաքրքիր է, որ այս հանգամանքը հրապարակորեն ընդունել է Անգլիայի պետական նշանավոր գործիչ, լիբերալ հայացքներ ունեցող Լլոյդ Ջորջը: «Ճշմարտությունը հաշտության պայմանագրերի մասին» իր հայտնի աշխատության մեջ նա գրել է. «Սան-Ստեֆանոյի հաշտությանը ռուսական զորքերը պետք է գրավեին Հայաստանը մինչև որ իրականացվեին անհրաժեշտ բարենորոգումները: Այդ որոշումը չեղյալ հայտարարվեց Բեռլինի 1878թ. պայմանագրով, որը մեր սպառնալից ճնշման արդյունք էր... Հայաստանը զոհաբերվեց մեր կերտած հաղթական զոհասեղանին: Ռուսները հարկադրված էին հեռանալ, տարաբախտ հայերը նորից ճգմվեցին իրենց կեղեքիչների կրնկի տակ... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895–1897, 1909 թթ. ահավոր սպանգներին և 1915 թ. զարհուրելի եղեռնին»⁸:

Չէր կարելի չհամաձայնել Լլոյդ Ջորջի այս միանգամայն ճիշտ տեսակետի հետ: Բնորոշ է, որ ժամանակին նման եզրակացության եկան նաև անգլիացի Ջեյմս Բրայսը, Մակ-Կոլը, իռլանդացի էմիլ Դիլլոնը, ռուս մտավորականներ Վեսելովսկին, Կովալևսկին և ուրիշներ:

7 Հայ ժողովրդի պատմություն. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը. խմբագր. պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի. Երևան, 1972, էջ 370:

8 Дэвид Ллойд Джордж. Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, с. 390.

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը իսկապես մեծ դժբախտություն եղավ հայ ժողովրդի համար: Շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի պարզ դառնար այդ իրողությունը: Բանն այն է, որ Բեռլինի պայմանագիրը ակնհայտորեն ցույց տվեց, որ արևմտյան պետությունները պաշտպանում են սուլթան Աբդուլ Համիդ II-ին և նրա շուրջը համախմբված պանիսլամիստներին: Անգլիայի կառավարության ղեկավարները, օրինակ, ձեռնարկեցին ամեն ինչ, որպեսզի պաշտպանեն սուլթանական Թուրքիային: Հետապնդելով իրենց իմպերիալիստական շահերը, նրանք բացահայտորեն արհամարհեցին արևմտահայության ազատագրական ձգտումները⁹: Արյունարբու, խորամանկ, բայց ոչ հիմար այդ բռնապետը օգտվեց դրանից և ոչ միայն մերժեց ռեֆորմներ նախատեսող բոլոր առաջարկները, այլև ավելի ուժեղացրեց ճնշումներն ու հարստահարությունները ինչպես հայերի, այնպես էլ մյուս քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Սկսվեց այսպես կոչված գուլումի շրջանը: Բնորոշ է, որ 1880 թ. արդեն սուլթան Աբդուլ Համիդը, խիստ ուժեղացնելով գրաքննությունը, արգելեց գործածել «Հայաստան», «Հայրենիք» բառերը, կատարեց մասսայական ձերբակալություններ, կախաղան բարձրացրեց մի շարք հայ գործիչների, սկսեց նախապատրաստել հայերի 1890-ական թթ. ցեղասպանությունը: Բայց, չնայած այդ բոլորին, արևմտյան պետությունները ջարդարարներին սանձահարելու ոչ մի ռեալ միջոցառում չձեռնարկեցին:

Հետաքրքիր է, որ XX դարի սկզբին Հայկական հարցի մասին գրող մի շարք անվանի գործիչներ, ինչպիսիք են Գեորգ Բրանդեսը, Էզվարդ Բեռնշտայնը և ուրիշներ, նույնպես ընդգծել են այն հանգամանքը, որ Բեռլինի կոնգրեսի որոշումները կործանարար եղան հայության համար, որ մեծ տերությունները, ըստ Ռուսաստանից, օգնության ձեռք չմեկնեցին սուլթանական Թուրքիայում կոտորվող արևմտահայերին¹⁰:

Որոշ հեղինակներ, չխորանալով գործի էություն մեջ, հավատ ընծայեցին անգլիացի այն գործիչներին, որոնք կեղծելով պատմական փաստերը, փորձում էին հայկական կոտորածների մեղքը զցել Ռուսաստանի վրա¹¹:

Մի քանի խոսք այն մասին, թե Հայկական հարցի ծագումը ինչ արձագանք գտավ իր ժամանակի հայ հասարակության մեջ:

Մեծահարուստ հայ էֆենդիները, հետադեմ հոգևորականներն ու հայ կոմպրադորական բուրժուազիան անվերապահորեն հանդես եկան Հայկական հարցի արծարծման դեմ, գտնելով, որ պետք է շարունակել հա-

9 Дж. С. К и р а к о с я н. Буржуазная дипломатия и Армения (70-е годы XIX века). Ереван, 1981, с. 144.

10 Г е о р г Б р а н д е с. Армянский вопрос (речь, произнесенная в Берлине). Перевод с немецкого А. Дадашева. 1906.

11 Մ. Գ. Ն եր ս ի ս յ ա ն. Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմության մի քանի հարցերի մասին. — «Պատմա-բանասիրական հանդես», 1994, N 1-2, էջ 15:

վատարիմ ու հնազանդ մնալ «բարեխնամ» օսմանյան պետությունը: Ճիշտ է նկատված, որ նման ստրկամտական տեսակետ ունենաե Կ.Պոլսի հայոց պատրիարքությունը¹²:

Լիբերալ մտավորականության մի մասը, ցուցաբերելով զարմանալի անհեռատեսություն, ոգևորվեց նրանով, որ Բեռլինում Հայկական հարցը ստացավ միջազգային բնույթ¹³, մյուս մասն ընդհակառակը, այն կարծիքը հայտնեց, որ չարաբաստիկ ճ1-րդ հողավածը նոր աղետներ է բերելու հայ ժողովրդին: Ազգային ժողովի մի շարք անդամներ զգուշացրին պատրիարք ներսես Վարժապետյանին հեռու մնալ եվրոպական պետությունների խարդախություններից:

Խրիմյան Հայրիկը և նրա համախոհները, խիստ հիասթափվելով Բեռլինի կոնգրեսից, եկան այն եզրակացություն, որ հույսը պետք է դնել սեփական ուժերի վրա:

Հայ ազգային ազատագրական շարժման ականավոր գաղափարախոսներ Բաֆֆին, Ռաֆայել Պատկանյանը, Գրիգոր Արծրունին և մյուսները անհրաժեշտ գտան, հենվելով Ռուսաստանի օգնության վրա, շարունակել հայ ժողովրդի արդարացի ազատագրական պայքարը: Պատկանյանը, օրինակ, կոչ էր անում.

Եղբարք հայեր, առե՛ք խոփը, տվե՛ք դարբնի՞ն կոելու,
Կոել-կոփել սուր ու սուներ՝ Հայաստանը փրկելու¹⁴:

Արևմտահայության ազատագրական պայքարը, սակայն, հիմնականում ուներ ինքնապաշտպանական բնույթ, քանի որ օսմանյան իշխանությունները մշտապես կազմակերպում էին հայ բնակչության կոտորածներ, ավերի ու թալանի էին ենթարկում հայոց երկիրը: Եվրոպական պետությունները չկատարեցին ոչ մի ունեալ քայլ իրագործելու Բեռլինի կոնգրեսի որոշումները:

* * *

Հայկական հարցի վերաբերյալ գոյություն ունի բավական հարուստ գրականություն: Հրապարակվել են մեծ թվով ուսումնասիրություններ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով: Հեղինակների մի մասին հաջողվել է բացահայտել պատմական ճշմարտությունը, ներկայացնել թուրքական իշխանությունների բարբարոսությունները, ցույց տալ ա-

12 Д ж. С. К и р а к о с я н. Буржуазная дипломатия и Армения..., с. 43.

13 Մինաս Չերազը, օրինակ, խիստ բարձր գնահատական տվեց կոնգրեսի համապատասխան որոշմանը: Տե՛ս նրա «Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն» գիրքը, որ լույս տեսավ 1878թ. Կ.Պոլսում: Ի գեպ, Չերազի դիվանագիտական հայացքները և գործունեությունը հանգամանորեն քննված են Արշակ Ալպոյաճյանի «Մինաս Չերազ. Իր կյանքը և գործը» (Գահիրե, 1927) աշխատության մեջ:

14 Ռ ա փ ա յ ե լ Պ ա տ կ ա ն յ ա ն. Երկեր, Երևան, 1955, էջ 23:

րևմտյան պետությունների սին խոստումներն ու երկերեսանիությունը: Սակայն քիչ չեն նաև այնպիսի հեղինակներ, որոնք գիտակցաբար աղավաղել, կեղծել են պատմական փաստերը:

Հայտնի է, որ Հայկական հարցը և ընդհանրապես հայ ժողովրդի պատմությունը ամենախայտառակ ձևով կեղծել, աղավաղել են թուրք սլատմաբանները, մասնավորապես Իսմայիլ Ուղունչարչիին, Օմեր Բարկանը, Էսաթ Ուրասը և ուրիշներ, որոնք թուրքական իշխանությունների հետ միասին համառորեն պրոպագանդել են այն տեսակետը, թե «Հայկական հարցը» կամ ինչպես իրենք են ասում՝ «էրմենի մասելեսին» արհեստականորեն ստեղծել են թուրքիայի թշնամիները, որ այդպիսի հարց չէր կարող ծագել, որովհետև հայերը Օսմանյան կայսրությունում ունեցել են բարեկեցիկ կյանք, ազգային ինքնավարություն, գտնվել են արտոնյալ վիճակում և այդ պատճառով միշտ էլ հավատարիմ են եղել օսմանյան պետությանը: Այս ահավոր ստախոսությունը մեծ ծավալ է ընդունել նաև մեր օրերում: Հայտնի է, որ թուրքական իշխանությունները հատկապես այսօր մեծ գումարներ են ծախսում, որպեսզի տարածեն իրենց կեղծիքը այն մասին, թե հայերը թուրքիայում չեն ենթարկվել ցեղասպանության: Զարմանալին այն է, որ այս բացահայտ սուտը հետևորդներ ունի եվրոպական մի շարք երկրներում: Կարծում եմ, որ պատմության թուրք կեղծարարների իսկական դեմքը ցույց տալու համար անհրաժեշտ է նորից հրապարակել ու մասսայականացնել այն կարծիքները, որ արտահայտել են Հեղելը, Կարլ Մարքսը, Չերնիշևսկին, Դոստոևսկին, Գլադստոնը, Էմիլ Դիլլոնը, Վիկտոր Հյուգոն, Շատոբրիանը և մյուս հանրահռչակ դործիչները օսմանյան պետության մասին: Հիշենք, օրինակ, թե ինչ է գրել Գլադստոնը. «Օսմանցիները ամենուր որտեղ ուր հայտնվել են՝ իրենց հետևից թողել են խորը արյունոտ հետք. նրանց տիրապետության ողջ տարածքում վերացել է քաղաքակրթությունը»¹⁵: Դոստոևսկին, խոսելով թուրքերի կողմից Բուլղարիայում 1870-ական թթ. կատարած բարբարոսությունների մասին, նշել է. «Տասնյակ, հարյուր հազարավոր քրիստոնյաներ ոչնչացվում են երկրի երեսից, ոչնչացվում են արմատապես, իսպառ... և դա կատարում է վայրենի հորդան՝ քաղաքակրթության ոխերիմ թշնամին»¹⁶: Իռլանդացի հռչակավոր արևելագետ Էմիլ Դիլլոնը գրել է. «Օտարերկրացի նշանավոր պետական մի գործիչ, որը սովորաբար համարվում է թուրքասեր, վերջերս ինձ հետ ունեցած մասնավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի է ճիշտ

15 Г л а д с т о н. Болгарские ужасы и Восточный вопрос. СПб., 1876, с. 6. (W. E. Gladstone. Bulgarian Horrors and the Question of the East. London, 1876).

16 Ф. М. Достоевский. Полн. собр. соч. в 30-ти томах. Т. 23, Л., 1981, с. 61–62.

բնորոշել որպես կազմակերպված ավազակույթյուն, օրինականացված սպանույթյուն և վարձատրվող անբարոյականույթյուն»¹⁷:

Ահա այսպիսին է եղել իրական վիճակը: Բայց այսօր թուրք պատմաբանները դրում են, թե Օսմանյան կայսրույթյունը կատարյալ դրախտ էր բոլոր ժողովուրդների համար: Ինչպիսի ստախոսույթյուն...:

Քննարկվող հարցի մասին սխալ տեսակետներ ու անհաջող ձևակերպումներ կան հայ պատմադրույթյան մեջ: Մի շարք հեղինակներ անտեսում են այն հանդամանքը, որ «Հայկական հարց» հասկացույթյունը վերաբերում է միայն Արևմտյան Հայաստանում, կամ այլ կերպ ասած՝ վեց վիլայեթներում բարենորոգումներ իրագործելու խնդրին, մի հարց, որ դարձավ մեծ պետույթյունների քննարկման առարկա¹⁸:

Որոշ շփոթույթյուն առաջացել է նրանից, որ Հովհաննես Թումանյանը, Լեոն և ուրիշ մեծ հեղինակույթյուններ երբեմն Հայկական հարց ասելով նկատի են ունեցել հայ ժողովրդի ծանր վիճակի, ճակատագրի հարցն ընդհանրապես: Լեոն, օրինակ, գրել է, թե Հայկական հարցն այնքան հին է, որքան ինքը հայ ժողովուրդը: Սակայն նրանց համապատասխան գրվածքները ուշադրությամբ ընթերցելու դեպքում պարզ է դառնում, որ և՛ Լեոն, և՛ Թումանյանը նույնպես Հայկական հարց արտահայտույթյունը կապում են 1878թ. Սան-Ստեֆանոյում և Բեռլինի կոնգրեսում բարձրացված հարցի՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրագործելու խնդրի հետ: Բայց չնայած այդ բոլորին, քիչ չեն այն հեղինակները, որոնք Հայկական հարց են փնտրում հին և միջին դարերում, կամ ավելի հաճախ 1677–1678 թթ.: Այս դեպքում խոսքը վերաբերում է հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու քաղաքական գործունեությանը¹⁹: Ի դեպ, հայտնվել է կարծիք նաև այն մասին, որ Հայկական հարցը ծագել է Բագրատունյաց թագավորույթյան անկումից հետո:

Սխալվում են նաև այն հեղինակները, որոնք Ղարաբաղի հարցը համարում են «Հայկական հարցի» մի մասը: Իրականում Ղարաբաղիների դարավոր հերոսական ազատագրական պայքարը, որ հայ ժողովրդի պատմույթյան փայլուն դրվագներից մեկն է, առանձին հարց է և չպետք է կապել Հայկական հարցի հետ:

Կարծում եմ նաև, որ ավելի ճիշտ կլինի, եթե «Հայկական հարցը Ռուսաստանում», «Հայկական հարցը Ֆրանսիայում» և այլ արտահայտու-

17 Քաղվածքը տե՛ս՝ Մ. Գ. Ն. Ե. ր. ս. յ. ան. Պատմության կեղծարարները. Երևան, 1998, էջ 38-39:

18 B. L. Z e k i y a n. The Armenian Way to Modernity. Venezia, 1997, p. 62.

19 L o u i s e N a l b a n d i a n. The Armenian Revolutionary Movement. Berkeley and Los Angeles, 1963, p. 21.

թյունների փոխարեն ասվի՝ Հայերի վիճակը Ռուսաստանում, Ֆրանսիայում և այլն:

Վերջացնելով իմ այս համառոտ զեկուցումը կոչ եմ անում մեր երիտասարդ պատմաբաններին շարունակել Հայկական հարցի պատմության ուսումնասիրությունը և արխիվային նոր նյութերի հիման վրա քողագերծ անել պատմության թուրք կեղծարարներին և նրանց օտարերկրյա հետևորդներին: